ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

14.11.2013թ.
211-ի 4

ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարի
տեղակալ պարոն Անդրանիկ Ալեքսանյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Ալեքսանյան,

2012թ.-ի հունիսի 13-ի Ձեր թիվ 04/16.1/5516-12 գրությամբ Ինֆորմացիայի ազատության կենտրոնին պատասխանել եք, որ "Ինտերնետ ցանցում պետական մարմինների պաշտոնական կայքերին ներկայացվող պահանջները հաստատելու մասին" որոշման նախագծը ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության եզրակացության հիման վրա լրամշակվել է եւ ներկայացվել շահագրգիռ մարմինների քննարկմանը:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք հայտնել, թե 2012թ.-ի հունիսից մինչ օրս շահագրգիռ ո՞ր մարմիններին եւ/կամ ո՞ր կազմակերպություններին է ներկայացվել նախագիծը, նաեւ հայտնել, թե նշված ժամանակահատվածում որ կազմակերպություններից/մարմիններից է ստացվել առաջարկություն նախագծում փոփոխության կամ լրացման վերաբերյալ: Նշենք, որ Նախագծի լրամշակված տարբերակը Տրանսպորտի և կապի նախարարության ինտերնետային կայքում տեղադրվել է 2013 թվականի հոկտեմբերի 21-ին (http://www.mtc.am/pages.php?lang=1&id=45&page_name=draft_bill)

Միաժամանակ հայտնում ենք, որ, Նախագծի լրամշակված տարբերակի վերաբերյալ Ինֆորմացիայի ազատության կենտրոնն իր առաջարկները նույնպես ունի, որոնք մեկշաբաթյա ժամկետում կներկայացվեն ՀՀ կառավարությանը եւ ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարությանը:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան